Որ գքեզ ի քո հաւատէն հանին։
Նախանձ մտաւ ի չար երիցնին
Որպէս յաւուրս Յիսուս Փրկչին,
Զքեզ չկամեցան նման նմին,
Կորեան կորուստն յաւիտենին։
Յետոյ յղեաց մարդ յ'աղանին,
Թէ, Թող բանան զեկեղեցին,
Թէ չէ՝ կոտրեմ զմեծ կպղաքնին,
Բռնութեամբ մտնամ յեկեղեցին։
Աղանին զայս ճուղապ տըվին,
Թէ, « Դու ելած ես մեր միջին.
Ժամն է Հայոց և մեր ձեռին.
Թող նա երթայ ժամըն Լեհին »։
Երբ զայն ասին պարոնտիրին,
Էառ զ'էմրէրն, եդ ի ծոցին,
Գնաց ի սէրայն սթառոստին
Եւ յարքեպիսկոպոսն Լեհին.
Ապա ի ռաթուշրն քաղքին,
Ուր մեծ դատաւորք նստէին.
Ասաց. « Ունիմ էմր արքային.
Ժամերն և Հայք՝ իմ ձեռս պիտին.
Բայց Հայքն չեն հնազանդ ինծի,
Զթողուն մտնել յեկեղեցի »։
Երեսս զ'էմրէրն և կարդացին,
Պագին և ճակտնին դրին։
Մարդ ղրկեցին առ աղանին,
Թէ Թող բանան ժամին դրռվին։
Նրքա ինատ արին, չբացին, [ցին։
Թէպէտ քանի հեռ մարդ ղրկե-
Նրք՝ ալ Հայոց յոյժ բարկացան,
Արքեպիսկոպոսըն և փաշան.
Զինուորքն ալ դուռըն գնացին,
Զերկաթի դրունս կործանեցին.
Բացեալ՝ զօռով ի ներս մըտին.
Թէսլիմ արին պարոնտիրին։
Իսկ Հայոց ազգն որ անդ կային՝
Վայ և եղուկ անձանց տային։
Իսկ Նըվիրակն յորժամ լըսեց,
Զմաղն և զմօրուքն իւր ճողեց.
Բովըն նստած զՀայքըն վարեց,
Զպատճառ եղողնին անիծեց։
Հայերն լալով հառաչէին
Առ Նըվիրակն երթային,
Ողբալով յոյժ յոյժ կսկծագին
Աղիողորմ զայս ասէին.
« Տէր Խաչատուր, այդ զի՞նչ արիր,
Դու մեր գլուխն ի՞նչ բան բերիր.
Մինթ առ մեզ վասն այն եկիր՝
Որ զմեր ժամերն խլել տայիր.
Էր դու չար մարդկանց լսեցիր,
Նոցա խրատովն ի շուրջ եկիր.
Միշտ ըզՆիկօլն դատ քաշէիր,
Եւ հազար գէշ նմա ասէիր.
Քեզ ի՞նչ պիտէր ի Լով գալու,
Կամ թէ զնա կարգէն ձգելու։
Գիտէիր դու զնա չահելու,
Եւ զայս չար բանս չերկարելու։
Քէմ լսեցիր դու ի Ստամպօլ,
Թէ ո՞րչափ չարիս արար Նիկօլ.
Բաժանեալ էին Հայք որ ի Լով.
Զի մռեցեր, հասար փութով.
Եկիր ։ եղար կողմ չար մարդկան.
Կանչէիր, կ'առնեմ դատաստան.
Այժմիկ եղար խիստ փոշէման.
Տեսնուս՝ գլխուդ ի՞նչ բաներ գան։
Լաւ էր զմին չարն չահէիր,
Քան զմեզ զամէնքըս կորուսիր,
Յեկեղեցեացըն զրկեցիր, [ցիր։
Զմեզ այլազգեաց ձեռք մատնե-
Ի՞նչմիածինն այլ խատր (1) արիր,
Քու մուրատիդ այլ չհասիր.
Զմեզ հոգւով մարմնով կորուսիր.
Մեծ փոթորակ թողիր գնացիր »։
Նիկօլն սկսաւ ոճիրս գործել,
Վտանգ Հայոց գլուխն անցընել,
Ըզքահանայսըն չարչարել,

1. Եթէ Թրք. խաչտր, քող, պատուակ։